ՈՒՍՄԱՆ ԱՆԱՌԱԿ ԶԱՎԱԿՆԵՐ

Ֆիզիկական մշտնջենավոր տառապանքի դատապարտված Սիզիֆն ու աստվածային տանջանքի ենթարկված Պրոմեթևսը զրույց էին անում։

— Բախտավո՞ր է քո ցեղը,— ստորերկրյա անդունդից հարցրեց հսկա Սիզիֆը, շարունակելով քարեր շպրտել դեպի [վերև] բարձր լեռան գլուխը, որոնք կրկին ցած էին գլորվում և նա դարձյալ այսպես անվերջ վերև էր ձգում։

— Ո՛չ, անբախտ է իմ ցեղը,— բարձրից որոտաց աստվածների շղթայակապ գերին։

— Նրանք է՞լ են քարեր ձգում դեպի վերև, որ [կրկին ներքև] միշտ ցած են ընկնում,— կրկին հարցրեց չարատանջ հսկան։

— Ո՛չ,— պատասխանեց Պրոմեթևսը,— դրանից էլ ավելի վատ։ Նրանք իրանց սրտերն են ձգում դեպի վերև, և այն ընկնում է ցած, նրանք իրանց հոգիներն են ձգում դեպի վերև, և հոգիներն ընկնում են ցած, իրանց մտքերն են ձգում դեպի վերև, և այն մտքերն ընկնում են ցած...

Ճակատագրական զարհուրելի անեծք, որ դրված է մտավոր աշխատանքի գործի վրա։

Ճշմարիտ, որքա՜ն դանդաղ են հաղթանակում մտքերն ու զգացմունքները. այնքան դանդաղ, որ կարծես թե ապարդյուն են անցնում։

Այսպես [դժվար] ծանր է եղել կուլտուրական առաջադիմության ուղին, այսպես դժվար է եղել փչացած մարդու վերանորոգությունը։

Բայց մենք այդպես չենք սովորել մտածել ու հասկանալ, այդ հուսահատական է մեր անհամբեր սրտերի և մեր ազատ թռչող մտքերի համար։ Մտավոր հեղաշրջումները մեզ համար մի տեսակ ֆեյերվերկներ են եղել—հեշտ ու արագ, հանկարծակի ու արմատական... մենք [տեսել ենք] ականատես ենք եղել փոթորիկների, որոնք խառնել են իրերը, փոխել են գրությունները, ձևերը, տարազները… մենք հավատացել ենք, որ ամենայն ինչ կատարյալ է, և մինչդեռ միամիտ հրճվելով տոնում էինք բարձր ու

լուսավոր մտքերի հաղթանակի տոնը, ահա հենց այդ երջանիկ ցնծության ժամանակ, իրերի ճշմարիտ ոգուց և բնավորությունից - լսվում է ճակատագրական հառաչանքը - այն մտքերը դարձյալ ընկել են ցած…

Ահա ձեզ Թիֆլիսը։ Մի՞թե [Թիֆլիսը] նա չի ներկայացնում մի այդպիսի մեծ հանգած հրախաղի տեսարան, ուր կարճատև շլացուցիչ լույսից զրկված թամաշավորները միայն այժմ են զգում, որ իրանք ոչ մի գիտակցական մասնակցություն ու կենսական դեր չունեին [սարքված] անցած հանդեսում, ուր այնքան աղմկում էին։ Եվ ամեն մարդ գնում է իր տունը, իր մութ գործին։

Այն մարդիկը, որոնք առիթ են տվել այս տողերին մեր [մեզ համար] կյանքի համար կարևոր մարդիկ են [համարված] նկատված, նրանց վրա թանկ հույսեր կան դրված [և նրանք ընդհանուր առմամբ համարված են նահատակներ...]

Դրանք ուսուցիչներ են. այս իսկի գրչի սխալ չի, **ուսուցիչներ** եմ ասում։ Նրանք մտել են կյանքի մեջ հայտնի հրահանգով ու ծրագիրներով, որոնցով հայտնվում են որպես լուսավորության առաքյալներ, վայրենի բարքեր կրթող, բարոյական սկզբունքների ջատագով ու ծավալող և անհաշտ ոխերիմ ամենայն խավարային գործերի։

[Մենք միշտ լսել ենք - նրանք նահատակներ են, ուսուցչի անունը խաբեց շատ]

Նրանք նահատակներ են - մենք միշտ այս լսեցինք։

Բայց կյանքը գաղտնիքներ [չի] պահելու սովորություն չունի, նա կատարում է յուր անտարբեր ընթացքը, երևան է հանում ամեն բան, և գործերը հայտնվում են իսկական պատկերներով։ Դուք տեսնում եք, որ այդ երևակայական նահատակը ո՛չ միայն անբարեխիղճ ուսուցիչ է եղել, և փոքրոգի մարտնչող, այլև վաշխառվի պնակալեզ արբանյակն ու [նրա հրեշավոր] մուրհակների գրագիրը, և կեղեքիչ պաշտոնյայի պատրաստակամ գործակատարը, իսկ հաճախ հենց մի քստմնելի վաշխառու։

Ամեն մարդ, ես հավատում եմ, որ կարող է սրանցից մի քանիսին հիշել։

[Բայց] Սրանցից ավելի տխուր պատմություն ունեն այն «ուսում առած» երիտասարդները, որոնք քահանա են դարձել։ Նրանք այն գաղափարական նպատակով քահանա դարձան, որ ժողովրդին բարձրացնեն իր ընկած դրությունից, իր եկեղեցուն հավատարիմ ծառայեն և այսպիսի հազար ու մի խոստումներ, որ անդադար անում են նրանք և միշտ էլ [հիշում] ակնարկում իրանց խնդիրքների մեջ, թե մանկության օրից ուխտած են. . .

Բայց էլ գաղտնիք չի, [դրանք] որ այդ խոստումները միայն մի տեսակ կաշառ էին նպատակի հասնելու համար, իսկ նպատակը եղել է հեշտ ապրել և գռփել [եկեղեցու անունով] ժողովրդին ավելի անաստված, քան յուր հանգուցյալ տգետ նախորդը։ Պսակի ժամանակ հարսանքատերերին խեղդել, թաղման ժամանակ մեռելատերերին կողոպտել, շարունակ լաց լինել քրիստոնեության համար և միշտ որոնել ու հնարել եկամուտների նորանոր աղբյուրներ։

Ուրիշ ի՞նչ փոփոխություն մտավ մեր հոգևոր դասակարգի մեջ սրանցով և արդյոք մեղմացա՞վ ժողովրդի արդար տրտունջը—արդյոք ժողովուրդը Ավետարանի իմաստը հասկացա՞վ։

Պակաս [վտանգավոր] չեն այն ինտելիգենտ մարդիկ, որոնք սկսում են պարապել վաճառականությամբ։ Դրանք էլ խիղճ ու գիտություն վաճառում են առաջին մուշտարուն և այնուհետև ճգնում են գերազանցելու իրանցից առաջ եղող փերեզակին։ Չէ՞ որ վաճառական է—պրծանք գնաց։

Ներսիսյան դպրոցն ավարտած մի պարոն, որ վաճառական է դարձել, ծիծաղելով պատմում էր, թե 40—50 տոկոս աշխատանքով է ծախում իր ապրանքը և աշխատում էր մեզ զարմացնել, թե ինչ ճարպկություններով է կարողանում խաբել տգետ մուշտարիներին։

Կան, որոնք թղթակից են — գրում <են> սուտ ու բամբասանք, որ անարգեն, անվանարկեն մեկն ու մեկին՝ անձնական վրեժ լուծելու համար։ [Եվ շատ հասկանալի է, թե որքան <3 անընթ. > վնասակար է այս ընթացքը, որ գործերին տեղյակ մարդկանց

աչքում գցում է մամուլի վարկը]։ Մոլորեցնում են մամուլը, խաբում հազարավոր ընթերցող մարդկանց և տպագրական խոսքի [վարկը] արժեքը վայր գցում։ Երանի թե միայն եղածը խեղաթյուրեին—դրանով չեն բավականանում, չեղած [սուտ] չլսված բաներ են հնարում։

Կան [որոնք] «ուսում առած» պաշտոնյաներ զանազան հաստատությունների մեջ, և դարձյալ նույն կաշառն ու նույն չինովնիկությունը, որ իսկի չէինք մտածիլ նրա մեջ։

Սրանց մեծ մասը այնքան էլ հիմար չեն, որ իրանք արածը հավանելի կարծեն։ Դրա համար էլ մի մարդու պատահելիս գիտեն դուրեկան հառաչանքներ արձակել, խոսել իդեալական բաներից և խնջույքներում հոտնկայս զանազան թանկագին ազգային կենացներ խմել ու տաք խոսքեր ասել։

Կան և այնպիսիները, որոնք **լոթիանա** խոստովանում են իրանց ընթացքը և աշխատում են [մի կերպ] բացատրել ու արդարացնել կյանքի պահանջներով, շրջանով, կարիքով և այլն։

Ոմանք էլ ուրացած ու մոռացած ամեն անցյալ, և ամեն կապ կտրած, ցինիկաբար ծաղրում են, գլուխները շարժելով ծիծաղում են, որ իրանք էլ մի օր բռնված են եղել այդ **քամիներով**։

Բայց չէ՞ որ այս մարդիկը գրքեր են կարդացել, ուսում են առել, կրթվել են… [Հապա] Ի՞նչ եղան այն բոլոր ուսուցիչների, գրողների, հրապարակախոսների ջանքերն ու ազդեցությունները, ի՞նչ եղան այն մտքերն ու զգացմունքները, որոնցով երբեմն ոգևորվում էին սրանք։

— Այն մտքերը դարձյալ ընկել են ցած, այն զգացմունքները դարձյալ ընկել են ցած։

Ընկել են ցա՛ծ… Այնտեղ կայան չկա մաքուր մտքերի ու սուրբ զգացմունքների համար, և ահա դարձյալ մութն է, սառն ու ահռելի, ուր շարունակ հեծող թշվառության վրա ծափ է տալիս, քրքջում [ու] է գազան կեղեքիչը, ոտնահարում ու բարձրաձայն ծաղրում ամեն բան, ինչ որ վեհ ու մաքուր է աշխարհքում։